ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2023/2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ (ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) և ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Մարիետա Մելիքյան 02.05.2023 12:15:40	Այս նախագծի վերաբերյալ ունեմ մեկ դիտարկում-առաջարկ: Հետպատերազմյան երկրում, առավել քան երբևէ ծննդօգնությունը պետք է գտնվի ուշադրության կենտրոնում և հասցվի հնարավորինս ավելի բարձր մակարդակի: Այդ ճանապարհին շատ կարևոր է գիտելիքներով զինված նոր կադրերով ոլորտի համալրումը: Ես կարծում եմ, որ ցանկալի է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» կլինիկական օրդինատուրային	Առաջարկը չի ընդունվել: Կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի համապատասխան մասնագիտություններով անվճար ուսուցման տեղերը ձևավորելիս հաշվի են առնվել առողջապահական համակարգի ներկա իրավիճակը և ակնկալվող կադրային պահանջարկը՝ նկատի ունենալով Առողջապահության և Պաշտպանության	

		տրամադրել 1 անվճար(ուսանողական նպասի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում) տեղ:	նախարարությունների համապատասխան հայտերն՝ ըստ մասնագիտությունների: Նախագծով «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությանը արդեն իսկ հատկացվել է անվճար ուսուցման երկու տեղ: Կլինիկական օրդինատուրայի անվճար ընդունելության տեղերը սահմանափակ են և հաշվի առնելով առողջապահական համակարգի ներկա իրավիճակն ու կադրային պահանջարկը՝ «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությանը ևս մեկ լրացուցիչ տեղ հատկացնելը նպատակահարմար չէ:	
2	Մարիետա Մելիքյան 02.05.2023 12:15:40	Ողջունում եմ առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի՝ պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմանը վերաբերվող նախագիծը: Սա հրաշալի հնարավորություն է նոր մակարդակի վրա դնել մարզային բժշկությունը՝ հագեցնելով	Ընդունվել է ի գիտություն	

		այն բարձր որոկավորում ունեցող, մոտիվացված և երիտասարդ կադրերով: Միաժամանակ այն թույլ կտա խուսափել մայրաքաղաք Երևանում կադրային կուտակումից և կապահովի համաչափ բաշխում ամբողջ Հանրապետության տարածքով:		